ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

««ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ս. ՖԼՋՅԱՆԻ, Ի. ՕԳԱՆԵԶՈՎԱՅԻ, Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ, Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.28 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ «ՄԵԼՏԵՔՍ» ՍՊԸ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ Ա. ԶԵՅՆԱԼՅԱՆԻ ԵՎ Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Մերժել «Մելտեքս» ՍՊԸ-ի դիմումով դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի և Ա. Ղազարյանի՝ ««Մելտեքս» ՍՊԸ-ի և քաղաքացիներ Ս. Ֆլջյանի, Ի. Օգանեզովայի, Ա. Բաղդասարյանի, Ա. Բաղդասարյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.28 հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, քանի որ դատաքննությունն սկսելու համար մնացել է մեկ շաբաթ ժամանակ և գրավոր ընթացակարգին համապատասխան առկա են գործի քննության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ-113